նաւորն տնօրէնութիւն համաձայն բաղձանաց նուիրատուին, և դասելով զանուն նորա ի թիւս բարերար Անդամոց Օրիորդական Դպրոցի՝ գրութեամբ ի 11 Օգոստոսի համարաւ 135, յայտնեաց նմա զգոհունակութիւն ի դիմաց իւրոց առ այս օրինակ ազգօգուտ նուիրագործութիւն նորաւ Ը.Յլ որովհետև յիշեալ պարոն Ղ.ուրղանեանցն ի վեր քան զնիւթական կարօղութիւն իւր ջերմաջերմ փափագանօք եցոյց զիւր զհամակրութիւն բաղմակարօտ Օրիորդական Դպրոցի Հայոց քաղաքիս, վասն որոյ Հոգաբարձութիւն Դպրոցաց անժխտելի պարտաւորութիւն համարէ ինքեան՝ զնորին ազգօգուտնուիրագործութենէն միջոցաւ Ը.բարատամագրոյ հրատարակել յընդհանուր գիտութիւն համազգեաց, զի և կարողքն և փարթամքն ընչիւք ի միջի ազգիս՝ հետևեսցին նախանձելի օրինակին այնորիկ, դարձուցանելով զուշ և զքաղցր ակնարկութիւն և զհամակրութիւն իւրեանց յԱզգային երկսեռ Դպրոցս, որոց բարեկարգ և յարատև ընթացք միայն կարեն յառաջադէմ կացուցանել զազգ մեր և ի ժամուն պատրաստի ունել վասն ապագայի զնեղոյցի և զհանճարաւոր ծնօղս և զուսուցիչս ի բարւոք դաստիարակութիւն մատաղ սերնդոց։

Յ. Սարգիսեանց

(Այս առթիւ Ը.բարատն ևս կը փութայ իւր շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանել Մեծապատիւ Մովսէս Յովսէփեան Ղ.ուրղանեանցին, միանգամայն կը գովէ նորին ազնիւ զգացմունքը և բարի և օգտաւէտ նպատակը)։

ԲՈՂՈՔ Ի ՇՈՒՇԻՈՑ

(Հետևեալ գրութեան հրատարակութիւնը անկողմնակալ ոգւով խնդրուած է ի մէնք։)

Խմբագրա-Ընկեր Ը.բարաց ամենայնի.

Ճշմարտութիւնը ինձ վրայ անհրաժեշտ հարկ կդնէ Մեղու Հայաստանի տարւոյս Յուլիս 31 ին 29րդ համարաւ Ղարաբաղու Ազգային Հոգևոր Դպրոցին դէմ հրատարակուած նամակին ծայրաբիր ստութիւնները յայտնել, որով և յայտ յանդիման ծանուցանել կեղծ նամակագրի դաւաճանութիւնը և մանաւանդ դպրոցիս բարեկարգութիւնը։ Նախ՝ պարոնը ըստ իւր գրութեան ժամ 9 ին դպրոցը կմտնէ, վարժապետները չի գտնուիր և աշակերտները անկարգ դրութեան մէջ կտեսնէ։ Ըստ ամենայնի սուտ և խարդախութիւն է. վասն զի ժամ եօթէն սկսեալ դպրոցիս վերակացուն անխափան աշակերտաց վրայ գտնուելէն և համեստ կացութեամբ նրանց իրենց օրական դասերու աշխատիրք հսկողութեամբ պարապեցնելէն զկնի, նաև դպրոցիս վարժապետներէն մէկը, որն որ նոյն իսկ դպրոցին մէջ բնակութիւն ունի, առաւօտեան սահմանեալ ութերորդ ժամէն երկու և շատ անգամ երեք ժամ յառաջ դպրոցը կը մտնէ, և դասատուութիւն կսկսի. և այս ուրանալ հոգին սուրբ հայհոյել ասել է։ Ուրեմն եթէ դպրոցիս մէջ այս ժամերին երկու վարժապետ պատրաստ կգտնուի, և ժամ ութին բոլոր վարժապետները, որոնք ոչ երբէք կարող են ուշանալ, վասն զի ոտճիկներէն կհանուի, ուզողը ստուգել թող դպրոցական օրագրութիւնը զննէ. ուր մեաց իններորդ ժամը, յորում պիտի տեղի ունենար նամակագրի հնարած ստութիւնները. մանաւանդ որ անցեալ տարի սեպտեմբերէն ըսկսեալ դպրոցիս նպատակներէն գերագոյն համարուեցաւ աշակերտները բարոյապէս զարգացնել և սրբել այն զեղծմունքները, որ 1864 թուէն թագաւորած էր դպրոցիս մէջ. և դպրոցս հասած է այս տարի այս առաքինական նպատակին. թող խարդախ գրիչները ինչ կուզեն բաղաչեն. ճշմարտութիւնը ակներև է և անվկանդ։ Երկրորդ՝ դպրոցիս մէջ ոչ թէ միայն այս տարի, այլ և իւր սկզբնաւորութենէն ի վեր Զամչեան քերականութեան դասատուութիւն տեսնուած չէ երբէք, այլ մինչև անցեալ տարիները Սալլանդեանի քերականութիւնն էր, որոյ վրայ դասատուութիւնն ապարդիւն լինելու համար վերացաւ, և նորա վարժապետն իւր հայերէն լեզուի և մանաւանդ դասատուութեան անհմտութեան պատճառաւ արձակուեցաւ, և նորա տեղ սահմանուեցաւ նոր ոճով և գրաւոր կրթութեան լեզուի դասախօ-

սութիւն, որոյ արդիւնք քիչ ժամանակէն տեսնուեցաւ, և այս տարուան հարցաքննութեան մէջ աշակերտաց անպատրաստի կանոնաւոր և վայելուչ շարադրութեամբ և մանրակրկիտ փորձերով յայտնի եղաւ բազմախուռն հանդիսականաց, որոնք ահաւասիկ քաղաքիս մէջ կենդանի և անժխտելի վկայք են։ Ընդ այսմ և դպրոցիս մէջ այս տարի ոչ երբէք դասաւորութեան համար աշակերտաց ձեռքը տրուած է այն Հայերէն դասագրեանքը, որոնց համար կզբաղանէ Նամակագիրը, այլ դասաւորութեան գրեանքն են նախակրթարանի մէջ միակերպ աշխարհաբար ընթերցարան առաջին դասատան մէջ աւետարան հանդերձ թարգմանութեամբ, երկրորդին մէջ Խորենացին, իսկ երրորդին՝ Եղիշէն. զորոնք թարգմանելէն զկնի, նոցա վրայ կաւանդուի նաև գործնական եղանակաւ քերականական կանոնները. և ոչ թէ ըստ Նամակագրի խարդախ գրութեան Զամչեանի վրայ անգիր անելով կամ անշգիկաբար գրելով. այսպիսի խօսքեր իսկապէս վայրենի կրից բանդագուշանք են։ Ողորմելին կերևի որ ոչ լոգիկայ զիտէ ի՞նչ ասել է և ոչ քերականութիւն, այլ միայն անունները լսած։ Երրորդ՝ դպրոցիս Ազգային պատմութիւնն կաւանդուի ճիշդ ժամանակագրութեամբ հանդերձ աշխարհագրութեամբ Հայաստանի, հնախօսութեան նիւթերէն, քաղուած այլ և այլ գիտելեաց, զրաւոր խորհրդածութեամբ և մտաւոր կրթութեամբ, ուրեմն որ յառաջադէմ աշակերտը չգիտէ Տիգրան Բ.ի Արշակունի Հայ թագաւոր լինելը, և թէ այն ժամանակ Հայաստանի մէջ ի՞նչ կրօնք կար. ինչպէս որ կգրէ սըտութեամբ Նամակագիրը. ոչ ապաքէն դաւաճանութիւն է, ոչ ապաքէն խարդախութիւն է. ոչ ապաքէն թշնամական կրից ծնունդ է։ Զորրորդ այս տարի այս դպրոցիս մէջ Ալէքսանդրապոլսեցի այդպիսի մի անձն տեսնուած չէ երբէք, և հետևարար ոչ այնպիսի ինքնահնար հարցաքննութիւն և աշակերտաց կողմէն առ նա պատասխանատուութիւն, կամ նոցա այդ անձի հետ ուսումնարանի բարեկարգութեան վրայ և Մեղուի խմբագրութեան վրայ երբէք զրոյց եղած չէ, այլ ինչպէս որ իր ստորագրութիւնը կեղծ և շինծու, նոյնպէս և գրածներն էլ կեղծ, շինծու և սուտ են բոլորովին։ Ինքն մի ուրուական հիւլ է, ուրուականաց հետ խօսած կլինի, ուրուականք իր թևին դիպած կլինին, և ոչ թէ աշակերտները. ապա թէ ոչ, այդ պարոնը թող վեր առնէ իր դիմակը, ոչ թէ ի ձեռն Տփխիսու Մեղուի լրագրին, որոյ խմբագիրն ցաւօք սրտի կտեսնենք, որ ըստ իր խոստովանութեան սուտ լուրերու միայն հանդիսատես, և իր լրագիրն ստութեանց և զրպարտութեանց հանդիսարան է, ինքն դպրոցիս յառաջադիմութեան, ինչպէս որ ամենին յայտնի է, առանձին նպատակաւ ոխերիմ բայց անզօր թշնամի, և իր լրագիրը այդպիսի և դոցա նման դաւաճան գրուածները համոզանօք*) իր էջերու մէջ ընդունելով այսօր ազգին մէջ մի Արշակաւան է, այլ իր երևակայական Ալէքսանդրապոլէն թող դայ ապացուցանէ իր ասածները։ Բայց ինչ ապացուցութիւն, մինչդեռ իր գրուածոց մէջ նշանախեց անգամ ճշմարիտ չկայ, ի հարկէ իր խարխը կփոխէ. կեղծ ստորագրութեան տակ կծածկուի, սուտ ճանապարհորդ կը ձևանայ, որպէս զի չյայտնուի իր խարդախութիւնները. «Որ ատէ զճշմարտութիւն ոչ գայ առ լոյս, զի մի՛ յանդիմանեսցեն գործք նորա»։ Կարծիք չկայ, որ եթէ յայտնուի, իր խարդախ գրուածոց համար ըստ օրինի շանթահար պիտի կործանի. վասն զի ուսումնարանը, վարժարանը Հոգաբարձութիւնն և հետևաբար հասարակութիւնն իր անմիտ կրից խաղալիկ չեն. գողութիւնն անպատիժ մնալու չէ։ Զգիտեմ թէ այդ անձինք ի՞նչ շահ պիտի քաղեն այդպիսի վայրա-

(*) Սորանից ամիս եւ կէս առաջ այս յօդուածը բացառութեամբ մէկ քանի մասնաւոր այժմեան փոփոխութեանց ուղարկուեցաւ Մեղու Հայաստանի լրագրոյն ի հրատարակութիւն. բայց ցարդ չտեսնուեցաւ, եւ կարծեմ որ տեսնուելիք չունի, ըստ որում ինքն իր լրագրական էջերու մէջ իր քմահաճոյ եւ շատ անգամ ինքնաստեղծ սուտ լուրերու միայն է հանդիսատես եւ ոչ թէ ճշմարտութեան։ Թող տեսնեն Ազգայինք, որ դպրոցիս դէմ եղած նամակները կհրատարակէ, իսկ հերքումն չի ընդունիր, ըստ որում հասարակաց լրագիր չէ։

խօսութենէ, որով պատրուակեալ կեղծեաք մի լրագրի էջերը կ'աղտոտեն, օգտակար յօդուածներ հրատարակելու արգելք կ'լինին. մի բարեկարգ դպրոց կ'վատահմանուեն, որ այս տարի այլևայլ կրից իսկապէս շանթ դարձաւ. Եթէ ժողովուրդ զրգռել կուզեն, որպէս զի իրենց անյայտ նենգաւոր նպատակին հասնին, այդ երազայոյս կարծիք է. վասն զի ժողովրդէն մեծագոյն, բարեմիտ և բան ի բուն մասն հասու և ականատես եղաւ դպրոցիս յառաջադիմութեան և բարեկարգութեան. արդէն ըստ մերձաւորութեան գիտէ, որ այդպիսի անձանց ապերասան ինքնահնար գրուածոց մէջ մի բառ ճշմարիտ չ'կայ. արդէն գիտէ, որ այդպիսի անձինք իրենց տգիտութեամբ և խոովայոյզ բարուք ժանտախտ են ազգին. Ուրեմն և դոցա գրուածները, եթէ այսուհետև որչափ ևս գրուին, ոչինչ յարգ և արժանաւորութիւն չ'ունին, նոցա երևակայական շանթերը անզօր, անները գործելի և նեռք տղայոց են. ուսումնարանն ազատ է այդ սուտիներէ, և իրաւամբ իւր Հայկական լեզուի յառաջադիմութեամբ կ'պարծի այսօր իրրև միակ Հայ ուսումնարան Ռուսաստանի մէջ, և իւր Վեհափառ Սուրբ Հօր խնամակալութեամբ և դպրոցիս Նախագահ սրբազանի աչալուրջ վերահասութեամբ իւր իսկական նպատակին համեմատ յառաջադիմութեան մէջ է. Թող ճշմարտութեան թշնամիները ինչ կուզեն գրեն, ինչ կուզեն բարբանջեն. Ես քաջ գիտեմ, որ ապառում չարանախանձ անձանց ճշմարտութիւնն ատելի է. ես գիտեմ որ, կրիւք հարրած մարդուն հաստատուն պատերը ծուռ, և բլշակնեալ աչաց լուսին խաւարած կ'երևին, ուստի զարմանք չէ, որ այդպիսի մտաւոր կուրաց աչքին Եղիշէն Սաղմոս կարծուի, Խորենացին կտակարան *). Եւ ես ո՛չ թէ այնպիսի մի դաւաճան և խաբէական նամակի կարևորութիւն տալու համար գլխաւորապէս գրեցի այս յօդուածը, ոչ, այնպիսի սուտ և խարդախ գրուածները արհամարհանաց միայն են արժանի. այլ դպրոցիս հանդամանք իսկութեամբ ծանուցանելու համար, որն որ, Արգոյ խմբագիր, կ'խնդրեմ ի պատիւ ճշմարտութեան հրատարակել պատուական լրագրոյդ միջոցաւ.

Ալէքսանդր Ռոդոսթանոց

Ի 1871 -ի 19 Սեպտեմբերի,

Ի Շուշի։

(*) Թէ եւ Դպրոցիս մէջ Սաղմոս եւ Կտակարան բրու ընթերցանութեան գիրք դաս չեն տրուիր, այց չգիտեմ թէ այդ պարոնները Սաղմոսից եւ Կտակարանից ինչու կզզուին, որ մի անկրօնի վայելուչ համոզմունք եւ գործ է։

ՄԱՑԻ ՈՐԴԵԿՈՐՈՑՍ Ի ԳԱՆՁԱԿ

Մազթաղ անուն այրի կին,
Է սա բնակիչ քաղաքիս.
Կրտսեր որդին իւր կայտառ
Գողտրիկ մարմնով ուրամեայ,
Լևոն յանուն յորջորջէր
Այն ինչ մանկիկն այն զուարթ
Եալ ի խաղալ ընդ մանկտեաց,
Էր տասներեքն այս ամսոյ,
Արևն ի մուտս խոնարհի.
Հասակակից՝ դառնան տուն,
Լևոնն այն օր ի գրգուիլ,
Զ'դառնայ դեռ ի գիրկ մօրն.
Մայրն ի միտս իւր վարանի,
Արդեօք զի՞ է զի այսօր,
Դեռ ո՛չ դառնայ սա ի տուն.
Վազրս առնու կասկածոտ,
Ըստ կանացի իւր բարուց,
Գնայ ի տունս սրտատրոփ,
Իւր ծանօթից՝ հարցանէ,
Ցետ ի բազմաց լսելոյն,
Զբացասականն պատասխան,
Գտանէ ոչ զբաղձալին,
Դառնայ ի տուն ձեռնունայն.
Որդեկորոյս թշուառ մայրն
Նախկին զիշերն ցառաւօտ,
Տարակուսեալ տագնապաւ,
Մուտ յանկողին բայց անքուն,
Թէպէտ զիւրև քաղցրիկ քուն
Տարածանէր քնքուշ թևս